## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 7-Ա

### ՆԱԽԿԻՆ ՌԻՆԴ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ 12.08.2008ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 33 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի պահանջով, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

Նախկին Ռինդ գյուղի գյուղապետի 12.08.2008թվականի <<Վարդան Համայակի Խաչատրյանին սեփականաշնորհված բնակարանի հողային տարածքի ուղղակի վաճառքի մասին>> թիվ 33 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման վերնագրի և տեքստի մեջ <<Համայակի>> բառը փոխարինել <<Հմայակի>> բառով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 8-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՐԱՆՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՇԱՀԲԱԶՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 0.20777 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.04253ՀԱ ԵՎ 0.16524ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Հրանտ Արտավազդի Շահբազյանի սեփականություն հանդիսացող 0.20777 հա (ծածկագիրը` 10-006-0053-0005, գործառնական նշանակությունը` բնակելի կառուցապատման)մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով երկու հողամասերին տալ հետևյալ հասցեները`

1. 0.16524հա-ին` Արենի համայնք, գ. Աղավանաձոր` 21-րդ փողոց թիվ 1,

2. 0.04253հա-ին` Արենի համայնք, գ. Աղավանաձոր` 21-րդ փողոց թիվ 1/1:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 9-Ա

### ԼՅՈՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2–րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշման հավելվածի 9-րդ հոդվածի 14-րդ կետով, հաշվի առնելով Ռիմա Սուքիասյանի և Լյովիկ Մանուկյանի դիմումները և հիմք ընդունելով Արենի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13.01.2022թ.-ի թիվ 1 նիստի N 2 արձանագրությունը *որոշում եմ՝*

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի 1 փողոց 32/1 հասցեի բնակիչ Լյովիկ Մեհրաբի Մանուկյանի /ծնված՝ 10.01.1948թ., անձն. AU 0547817, տրված՝ 14.12.2021թ.. 037-ի կողմից/ նկատմամբ սահմանել պատրոնաժ:

2. Պատրոն նշանակել կնոջը՝ Արփի բնակավայրի 1 փողոց 32/1 հասցեի բնակիչ Ռիմա Սուրենի Սուքիասյանին /ծնված 30.01.1952թ., անձ.՝ 004415790, տրված՝ 28.11.2014թ. 037-ի կողմից:/

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Ռիմա Սուքիասյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 10-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17.12.2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 336 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և հիմք ընդունելով Արփի բնակավայրի վարչական ղեկավարի 18.01.2022թվականի թիվ 09 գրությունը՝ Դավիթ Շահենի Սարգսյանին ՀՀ զինված ուժեր զորակոչելու մասին, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է.***

Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ղեկավարի 17.12.2021թվականի <<Գուլվարդ Գրիգորի Սարգսյանի նկատմամբ պատրոն նշանակելու մասին>> թիվ 336 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 11-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՀԻԿ ԴԵՐԵՆԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 0.01520 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.00790 ՀԱ ԵՎ 0.00730 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վահիկ Դերենիկի Օհանյանի սեփականություն հանդիսացող 0.01520 հա (ծածկագիրը՝ 10-006-0054-0020, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով երկու հողամասերին տալ հետևյալ հասցեները՝

1. 0.00790 հա-ին՝ Արենի համայնք, գ. Աղավանաձոր՝ 1 փողոց թիվ 36/2,

2. 0.00730 հա-ին՝ Արենի համայնք, գ. Աղավանաձոր՝ 1 փողոց թիվ 36/7:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 12-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 2 ՓԿՂ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարը ***որոշում է՝***

1. Արենի համայնքի Արփի բնակավայրի 5-րդ փողոց 2 փկղ թիվ 5 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 10-012-0048-0010, հողամասի չափը՝ 0.1207 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) Վազգեն Սեյրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված 78.5 քմ բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Առաջարկել կառույցն իրականացրած Վազգեն Հարությունյանին վճարելու 1 քմ.՝ 1028 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված բնակելի տան համար՝ ընդամենը 80 698 (ութսուն հազար վեց հարյուր իննսունութ) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,
4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սահմանված գումարը չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**